ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Բելգիայի Թագավորության Սենատի նախագահ Արման դը Դեկերի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանի:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով պատվարժան հյուրին, անդրադարձավ հայ-բելգիական բարեկամական կապերին: Վեհափառ Հայրապետն ի դեմս պրն Դեկերի շնորհակալություն հայտնեց բելգիական իշխանություններին Բելգիայի հայ համայնքի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայ Եկեղեցու առաքելության մասին, անդրադարձ կատարվեց տարածաշրջանային խնդիրներին, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամներին, ովքեր Հայոց Հայրապետի հրավերով Լիբանանից ժամանել էին Ս. Էջմիածին՝ Համախմբումի հիմնադրության 50-ամյակը տոնախմբելու նպատակով:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով Համախմբումի անդամներին, իր հայրական օրհնությունն ու գնահատանքը բերեց Համախմբումի նախագահ տիկ. Միմի Հարությունյանին եւ բոլոր անդամներին, որ արդեն կես դար մեծ նվիրումով եւ նախանձախնդրությամբ իրենց անսակարկ նպաստն են բերում Մայր Աթոռի եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառացմանը՝ զորավիգ լինելով Մայր Եկեղեցու եկեղեցաշեն եւ ազգօգուտ ձեռնարկներին:

«Առանձնահատուկ ուրախություն եւ գոհունակություն է Մեր գահակալության առաջին իսկ օրվանից տեսնել ձեզ աջակից Մեզ՝ լծված Հայ Եկեղեցու պայծառացման գործին: ...Ուրախ ենք, որ այս առիթն ընձեռվեց Մեզ՝ շնորհակալություն հայտնելու Մայր Աթոռի հարազատ զավակներիդ, այս հաստատության զինվորներիդ, պանծացնելու ձեր վաստա-

կը, ոգին ու նվիրյալ ծառայությունը Ս. Էջմիածնին»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ամենայն Հայոց Հայրապետը, շնորհավորելով Համախմբումի անդամներին հիմնադրման 50-ամյակի առիթով, մաղթեց, որ նրանց օրինակը խանդավառի բոլոր հայուհիներին, որպեսզի իրենց ծառայությունը բերեն Հայ Եկեղեցու առաքելությանը:

Հանուն Համախմբումի ողջույնի խոսք ասաց տիկ. Միմի Հարությունյանը՝ շնորհակալություն եւ երախտագիտություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրավերի համար: «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» նախագահը նաեւ շնորհավորեց Նորին Սրբությանը գահակալության տասնամյակի առիթով:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հանգամանորեն ներկայացրեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայիս գործունեությունը հայոց կյանքի տարբեր ոլորտներում:

Հայրենիքում մեկշաբաթյա կեցության ընթացքում Լիբանանի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամները այցելեցին Սեւանի Վազգենյան դպրանոց, Կեչառիսի, Խոր Վիրապի, Նորավանքի վանական համալիրներ, ուխտի մեկնեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, եղան Մայր Աթոռի հովանու ներքո գործող Հայորդյաց տներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՕՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ, որին մասնակցում էին «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամները, որոնք այդ օրերին Վեհափառ Հայրապետի հրավերով գտնվում էին Հայրենիքում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորության ներքո նշելու Համախմբումի հիմնադրման 50-րդ տարեդարձը:

Պատարագիչն էր ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի փոխառաջնորդ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը:

Սրբազան արարողության ընթացքում Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանն ընթերցեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության գիրը՝ «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ:

«Միավորված Սուրբ Էջմիածնի սիրով, Տիկնանց Համախմբումի անդամները իրենց կյանքով ու հավատի գործերով նեցուկ դարձան Ամենայն Հայոց Հայրապետությանն ու Հայոց Հայրապետին քաջալերելով մեր ժողովրդի զավակներին անխախտ պահել հավատարմությունը Սուրբ Էջմիածնին եւ օգտակարություն բերել Միածնի Էջքով սրբագործված մեր հավատո կենտրոնի շինությանն ու պայծառությանը: Մենք վկա ենք եղել, թե որքան բարձր